ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ#1

1 ՀԱՏ ԲԺՇԿԱԿԱՆ ԹԹՎԱԾԻՆ ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱՅԱՆԻ ԳՆՈՒՄ, ՆԵՐԱՌՅԱԼ ՏԵՂԱԴՐՈՒՄ, ՄԵԿՆԱՐԿ և ՈՒՍՈՒՑՈՒՄ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՄԲ, CR4/RFQ/D-G/036-20

Հարգելի Հայտատուներ,

Ի պատասխան, 2020թ-ի հուլիսի 25-ի ARMEPS համակարգի միջոցով ստացված հարցմանը, կից Ձեզ ենք ներկայացնում հետևյալ պարզաբանումը վերոնշյալ մրցույթի վերաբերյալ («Գնառաջարկի հրավեր» 7-րդ կետ).

Հարց. Մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի բժշկական սարքավորումների մատակարարման առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը գնահատվում է նմանատիպ (նմանատիպ պայմանագրի ամբողջական տարբերակը՝ ներառյալ հանձման-ընդունման և/կամ վերջնական վճարման ակտերը և/կամ գնորդի կողմից պայմանագիրը բարեհաջող կատարելու նամակ), եթե դրա շրջանակներում մատակարարված բժշկական սարքավորման(ների) ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:
Արդյոք սրտի բաց վիրահատության ժամանա օգտագործվող արյան արհեստական շրջանառության ապարատի մաս կազմող օքսիգենատորի, որը ՀՀ է ներմուծվում 9018 908400 (9018 Բժշկության, վիրաբուժության, ատամնաբուժության կամ անասնաբուժության մեջ օգտագործվող սարքեր եւ սարքվածքներ՝ ներառյալ սցինտիգրաֆիկական ապարատուրաները, էլեկտրաբժշկական այլ ապարատուրաներ եւ տեսողությունը հետազոտելու սարքեր. – էլեկտրաախտորոշիչ ապարատուրա (ներառյալ ֆունկցիոնալ ախտորոշման հետազոտությունների կամ ֆիզիոլոգիական պարամետրերի հսկման համար նախատեսված ապարատուրան).) ԱՏԳ կոդով, Հեմոդիալիզատորի (ԱՏԳ կոդը 90189030000) և ԱԱՇ-ին միացնող համակարգի պայմանագիրը կարող է հանդիսանալ նմանատիպ պայմանագիր:
Արդյոք միայն մեկ պայմանագրի ծավալը գումարային արտահայտությամբ չպետք է պակաս լինի գնային առաջարկի հիսուն տոկոսից, թե կարող է մի քանի պայմանագրի հանրագումարով ներկայանալ:

Պատասխան. Լրասարքերը և միանգամյա օգտագործման բժշկական պարագաները չեն կարող գնահատվել որպես նմանատիպ: Միայն մեկ պայմանագրի ծավալը գումարային արտահայտությամբ չպետք է պակաս լինի գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Հարց. <u>Նշում.</u> Միավորի գնի հաշվարկման և ապրանքի (ներառյալ հարակից ծառայությունների) ընդհանուր գնի միջև տարբերության դեպքում գերակայողը միավորի գինն է: Խնդրում ենք պարզաբանել այս նշումը:

Պատասխան. Համաձայն «Գնառաջարկի հրավեր» 6-րդ կետի, (ii) ենթակետի.

(ii) <u>ԳՆԱՆՇՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ-</u> **Տեխնիկական մասնագրերին էականորեն համապատասխանող առաջարկները կգնահատվեն ընդհանուր գնի համեմատման սկզբունքով:**

Առաջարկները գնահատելիս Պատվիրատուն յուրաքանչյուր առաջարկի գնահատված գինը կորոշվի գնառաջարկի թվաբանական ցանկացած անճշտությունների ուղղումների միջոցով, հետևյալ կերպ.

ա) այնտեղ, որտեղ կա անհամապատասխանություն բառերով և թվերով տրված գումարների միջև, կգերակայի բառերով գրվածը,

բ) այնտեղ, որտեղ կա անհամապատասխանություն միավոր արժեքի և քանակի բազմապատկման արդյունքով ստացված ընդամենի միջև, կգերակայի նշված միավորի արժեքը,

գ) եթե ապրանքների մատակարարը հրաժարվի ընդունել ուղղումները, նրա առաջարկը կմերժվի:

Հարց. Արդյոք գնառաջարկի ձևում պետք է նշվի ընդհանուր գին (Ապրանքի գինը և հարակից ծառայություններ գինը միասին): Սա նաև վերաբերվում Armeps.am–ում ֆինանսական ծրարում նշվող գնին: Նաև ինչ փաստաթուղթ պետք է կցենք նույն ֆինանսական ծրարում:

Պատասխան. Գնառաջարկի ձևում, ինչպես նաև Armeps.am–ում ֆինանսական ծրարում պետք է նշվի ընդհանուր գինը (Ապրանքի գինը և հարակից ծառայություններ գինը միասին): Ֆինանսական ծրարում կցվում է Գնառաջարկի ձևը:

Հարգաքով,
Քրիստինե Ղամբարյան
Գնումների մասնագետ
ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
ՀՀ, ք. Երևան 0051, Կոմիտասի 49/4, 5-րդ հարկ
Հեռ.՝ (+374 10) 29 75 36, (+374 10) 29 75 37
Էլ. հասցե՝ procurement@healthpiu.am, kristine.ghambaryan@healthpiu.am
Վեբկայք՝ www.healthpiu.am